Արձանագրություն 5

ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով վերականգնողական աշխատանքների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

09.07.2020թ.
ժ.12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմինե Ստեփանյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Լուսինե Իգիթյան /գնահատող/
Խորեն Մնացականյան /գնահատող/
Արմեն Հակոբջանյան /բացող/
Սամվել Մուսոյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան

1. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքի և կայացված որոշման վերաբերյալ
(Ա. Ստեփանյան)

1.1 Ս.թ. հունիսի 1-ին <<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոք է ներկայացրել, խնդրելով պարտավորեցնել նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու հայտը մերժելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու 13.05.2020թ կայացված որոշումը: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 19.06.2020թ կայացված և 23.06.2020թ հրապարակված որոշմամբ բավարարվել է <<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ի բողոքը:

2. Գնահատման գործընթացի կասեցման և բանակցությունների կազմակերպման վերաբերյալ

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և «Ալ-Մասքա» ՍՊԸ-ին հրավիրել հայտով ներկայացված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների ս.թ. հուլիսի 14-ին ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 308 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի բանակցությունների կազմակերպման նիստը շարունակվեց 14.07.2020թ. ժամը 11:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմինե Ստեփանյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Լուսինե Իգիթյան /գնահատող/
Խորեն Մնացականյան /գնահատող/
Արմեն Հակոբջանյան /բացող/
Սամվել Մուսոյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան
«Ալ-Մասքա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ավետիք Ավետիսյան

3. Գնման գործընթացին հայտ ներկայացրած մասնակցի հետ միաժամանակյա բանակցությունների վարման մասին

3.1 «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի հայտով առաջարկված գների նվազեցման նպատակով կազմակերպել բանակցություն սահմանելով 5 րոպե տևողությամբ ժամանակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3.2 Միաժամանակյա բանակցությունների վարման համար սահմանված ժամանակահատվածի ավարտին «Ալ-Մասքա» ՍՊԸ-ի կողմից գնի վերաբերյալ եղել է նոր առաջարկ /հիմք՝ հավելված 1/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Գնահատման արդյունքների մասին

4.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը <<Ալ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ի հայտի գնահատել բավարար և հայտարարել առաջին տեղ զբաղեցրած /ընտրված/ մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և համաձայն ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 2020թ հուլիսի 2-ի թիվ 01.1/26-1/9880-2020 գրությունը՝ փաստաթղթային եղանակով ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Ա. Ստեփանյան /նախագահ/

---------- Լ. Իգիթյան

---------- Խ. Մնացականյան

---------- Ա. Հակոբջանյան

---------- Ս. Մուսոյան

---------- Ա. Մարգարյան /քարտուղար/

Հավելված 1

ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-20/66 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով վերականգնողական աշխատանքների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության

Բանակցությունների արդյունքում առաջարկված գները

Չափաբաժին	Աշխատանքի անվանումը	Նախահաշվային գինը	<<Ալ-ՄԱԱՔԱ>> ՍՊԸ	
			Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
			առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	Բնունիս համայնքի Սբ Աստվածածին եկեղեցու վերականգնման և մասնակի բարեկարգման աշխատանքներ	23 758 500	20 000 000	24 000 000
Բանակցությունների ընթացքում առաջարկված գները			19 790 000	23 748 000
Բանակցությունների ավարտին առաջարկված գները			19 790 000	23 748 000

<<Ալ-ՄԱԱՔԱ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ _____ Ավետիք Ավետիսյան